ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երկարատև, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց հասարակական-քաղաքական և պետական ականավոր գործիչ, ճանաչված մտավորական, ՀՀ վաստակավոր ժուռնալիստ Սուրեն Սամվելի Ավետիսյանը: Նա ծանրակշիռ վաստակ ունի մեր երկրի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում:

Ս. Ավետիսյանը ծնվել է 1931 թվականի հունվարի 6-ին, Երևանում: 1952 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել է «Ավանգարդ» և «Երեկոյան Երևան» թերթերի խմբագրություններում, այնուհետև եղել է «Երեկոյան Երևան» թերթի գլխավոր խմբագիր: 1971–74 թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմի բաժնի վարիչի տեղակալ,1974–80 թթ. ընտրվել է Երևանի քաղկոմի քարտուղար, 1980–86 թթ. նշանակվել է Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ: Ս. Ավետիսյանի կազմակերպչական ունակությունների, աշխատանքային հարուստ փորձի, մարդկային բարձր արժանիքների շնորհիվ նրան շուտով վստահվում են ավելի բարձր ու պատասխանատու պաշտոններ, ուր և առավել լիարժեք են դրսևորվում ղեկավարի կազմակերպչական տաղանդը և մարդու նրա ողջ էությունը, կարողություններն ու անմնացորդ նվիրումը իր ժողովրդին: 1986–88 թթ. Ս. Ավետիսյանը աշխատել է հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ՝ համակարգելով հանրապետության կրթության, մշակույթի, առողջապահության, մամուլի և այլ կարևոր բնագավառներ: 1988 թ. Ս. Ավետիսյանն ընտրվել է հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ: Այդ դժվարին տարիներին նա կարևոր ներդրում է ունեցել մեր պետականության կայացման գործում:

Հայաստանի անկախությունից հետո նա շարունակեց իր բեղմնավոր գործունեությունը: 1991 թ. աշխատել է Հայկական բաց համալսարանում՝ որպես փոխտնօրեն: Այնուհետև նա կրկին վերադարձել է իր նախասիրած՝ մամուլի ոլորտ և շուրջ 15 տարի աշխատել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում՝ որպես

գլխավոր խմբագիր և իր ողջ ուժերը նվիրել ակադեմիական գրահրատարակչական գործի բարելավմանն ու զարգացմանը:

Սուրեն Ավետիսյանն ընտրվել է Գերագույն խորհրդի և Երքաղխորհրդի մի քանի գումարումների պատգամավոր, պարգևատրվել է բազմաթիվ պետական շքանշաններով և մեդալներով: Նա հասարակական մի շարք կազմակերպությունների անդամ էր, մասնավորապես մեծ է նրա դերը Հայաստանի «Մանկական ֆոնդի» կազմավորման և զարգացման գործում:

Ս. Ավետիսյանը անչափ համեստ, սկզբունքային, մարդկային մեծ հմայքի ու բարձր արժանիքների տեր անձնավորություն էր և մշտապես վայելում էր գործընկերների սերն ու հարգանքը: Նա հեռացավ կյանքից՝ թողնելով անավարտ շատ գործեր, թողնելով նաև բարի անուն և հիշատակ:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք
«Գիտություն» հրատարակչություն